ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Իւր ժամանակին հաղորդուած էր «Լումայ»-ում, որ Սսի պատգամաւորական ժողովը ձայների առաւելութեամբ ընտրեց Կիլիկիոյ կաթողիկոս Տ. Գէորգ եպիսկոպոս Երիցեանին, բայց վերջինս անորոշ պատճառներով հրաժարուեց վերջնապէս։ Նշանակուեցաւ նոր ընտրութիւն՝ Պատրիարքարանի պատուիրակ Մովսէս եպս. Կեօմրիւքճեանի նախագահութեամբ։

Ընտրական ժողովը սեպտեմբերի 29-ին գումարուեցաւ Աղանայի ս. Աստուածածին եկեղեցում, որին մասնակցել են 43 պատգամաւոր 57 ձայնով, ուր գաղտնի քուէարկութեամբ ընտրուել են հետեւեալ 6 թեկնածուները.—Տրդատ եպս. Պալեան (44 քուէ), Ստեփաննոս եպս. Ցովակիմեան (42), Բարդուղիմէոս արքեպս. Զամչեան (40), Ներսէս եպս. Արսլանեան (39), Սահակ արքեպս. Խապալեան (37) և Մովսէս եպս. Կեօմրիւքճեան (34)։

Վեցանուն ցանկը հեռագրով հաղորդուած էր Պատրիարքարան, որ Խառն ժողովին առաջարկելուց յետոյ՝ ներկայացուել է կառավարութեան. վերջինս ցանկը սրբագրելով՝ պատրիարքարանի միջոցով հեռագրով հաղորդել է Աղանա ընտրական ժողովին, ուր ամսոյս 20-ին վերջնական քուէարկութեան ժամանակ Կիլիկիոյ տաճ կաթողիկոս է ընտրուել Ամենապատիւ Տ. ՍԱՀԱԿ արքեպիսկոպոս Խապալեանը, ս. Երուսաղէմի Մայր վանքի լուսարարապետը։

Նորընտիր Տ. Սահակ կաթողիկոսը այնքան ծանօթ է մեզ ուսահայերիս, որ աւելորդ ենք համարում նորից ծանօթացնել նորան ընթերցողներին։ Ասենք միայն, որ նա բաւական զարգացած և լուսամիտ անձնաւորութիւն է, հմուտ հայ եկեղեցու գիտութեան և արտաքին ուսմունքներին, ունի բաւական գրաւոր աշխատութիւններ, հետևող է խաղաղ զարգացման քաղաքականութեան և այս ամենի հետ լայտնի է իւր բարեհամբոյր բնաւորութեամբ և իբրև միաբան ս. Էջմիածնի՝ հաւատարիմ Հայաստանեայց ս. Եկեղեցուն և նորա աւանդական կարգերին։

նա երկար տարիներից ի վեր վարում է ս. Երուսաղէմի լուսարարապետի պատասխանատու պաշտօնը։

Սահակ սրբազանի ընտրութիւնն ի կաթողիկոսութիւն ի սրտէ ողջունելով «Լուսայ» ի խմբագրութիւնը լիալոյս է, որ նորա պաշտօնավարութիւնը պիտի ծառայէ Կիլիկիայի լեռնական հայ հօտի բարոյական շինութեան, մաղթում ենք, որ նորա օրօք վերանայ Կիլիկիայի հայ ժողովրդի կրօնական պառակտումը, վերջ տրուի այնտեղ կատաղի կերպով մղուող՝ եզուիտների և բողոքական քարոզիչների պրոպագանդային և հիմք դրուի թշուառ ժողովրդեան մէջ ուսման և դիտութեան ծաւալման։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼԵՀԱՑԻՔ ԵՒ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Տարուս ապրիլ ամսի սկզբին երկու լեհացի քահանաներ դիմելով Ամերիկայի հայոց առաջնորդ Տ. Յովսէփ եպս. Սառաճեանին՝ մատուցել են հետեւեալ խնդրագիրը.

«Ամերիկայի լեհացի ժողովուրդէն մաս մը հինգ տարի առաջ հռովմէական եկեղեցիէն բաժնուելով կազմեցին այժմ «Լեհական ուղղափառ եկեղեցի»ն մը։ Ութ քահանաներ կը պատկանին այժմ մեր այդ եկեղեցւոյն, որուն հիմը կը կազմէ՝ Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը բաց ս. Գրոց պարզունակութեան և առաջին տիեզերական ժողովոց— Նիկիոյ, Կ. Պոլսոյ, Եփեսոսի և Քաղկեդոնի վճիռները։ Հիմայ կուզենք մեր եկեղեցիի ապագան ապահովել թէ հոս՝ Ամերիկայի մէջ, և թէ Լեհաստանի մէջ, և մեր այդ նպատակին հասնելու համար կուզենք ունենալ եպիսկոպոս մը իբրև գլուխ։ Ուստի, ձեզի դիմելով, կաղաչենք որ մեր քահանաներէն մին՝ մեր կղերական դասէն և ժողովուրդէն ընտրուելով եպս. ձեռնադրուի ձեր Առաքելական և կաթուղիկէ Հայ Սկեղեցիէն։ Նամակս ներկայացնող արժ. քահանաները, որոնք մեր եկեղեցւոյ պատուիրակներն են, պիտի բացատրեն ձեզ մեր կրօնական դատին մանրամասնութիւնները։ Ձերդ խոնարհ ծառայ ի Քրիստոս Ֆրանսուզ Հոտուր, վարիչ լեհական ուղղափառ եկեղեցւոյ (Ամերիկա)։

Սառաճեան սրբազանը լալանելով պատգամաւորներին, որ առանց ծայրագոյն իշխանութեան թոյլտուութեան ինքը ոչ նոցա ընծայացուներին կարող է քահանայ ձեռնադրել և ոչ նոցա եպիսկոպոսացուին ուղարկել Էջմիածին ձեռնադրուելու՝ խնդիրը մատուցել է Վեհ. Հայրապետին ի տնօրէնութիւն։

Ազգիս Հոգևոր Պետը, որքան մեզ լալանի է սիրով ընդունելով այդ խնդիրը՝ հրամանագրել է Ամերիկայի հայոց առաջնորդին՝ նախապէս որոշել խնդրատու ժողովրդի և նոցա